ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 հուլիսի 2026թ. թիվ 491-Ա

Լ.ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻՆ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱՐԵՎԱՇՈՂԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի ՎԱՐՉԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԱՍԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 95-րդ հոդվածի 1-ին մասի, ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի մարտի 2-ի «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության վարչատնտեսական մասի համակարգողի նշանակման կարգը հաստատելու մասին» թիվ 259-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 11-րդ կետով և հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Արևաշողի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի վարչատնտեսական մասի համակարգողի պաշտոնի թափուր տեղը զբաղեցնելու համար դիմած հավակնորդի հետ պայմանագրի կնքման մասին 2026 թվականի հուլիսի 10-ի արձանագրությունը՝

Ո ր ո շ ո ւ մ եմ.

1. Լիլիթ Անդրանիկի Կարապետյանին 2026 թվականի հուլիսի 13-ից նշանակել «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Արևաշողի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի վարչատնտեսական մասի համակարգող և նրա հետ կնքել աշխատանքային պայմանագիր՝ հինգ տարի ժամկետով:

2. Լ.Կարապետյանի վարձատրության չափը սահմանել համաձայն պայմանագրի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Ստորագրող
ԱՐԵՆ ՄԿՐՏՉՅԱՆ
1204920311

2026-07-10 16:55:45 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ՝ Ա.ՄԿՐՏՉՅԱՆ

2026թ. հուլիսի 10
ք.Վանաձոր